600.0606.30.11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2007 թվականի № 606Ա
քաղ. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին. Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №272Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 2.711 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3.253 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 2749.37 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3299.24 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 9.384 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 11.261 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 379.05 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 454.86 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 14.074 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 16.889 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 8.995 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 10.794 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 594.41 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 713.29 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 13.582 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 16.298 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 1.509 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.811 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 284.51 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 341.41 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 1.001 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.201 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 320.05 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 384.06 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի ամբողջ քանակի համար.՝ 0.875 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.050 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ -ի համար՝ 0.875 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.050 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 41.8813 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 50.2576 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 0.0980 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.1176 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 1-ի «Էլեկտրաէներ-գետիկական համակարգի սակագների մասին» № 311Ա և 2007 թվականի մայիսի 22-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության. սակագների սահմանման մասին» № 226Ա որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
30 նոյեմբերի 2007թ.